



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ  
Հ Ր Ա Մ Ա Ն Ա Գ Ի Ր Ը

Ա. Ս. ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ «ՀԱՅՐԵՆԻՔԻՆ ՄԱՏՈՒՑԱԾ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ՀԱՄԱՐ» 1-ԻՆ ԱՍՏԻՃԱՆԻ ՇՔԱՆՇԱՆՈՎ ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով 2005 թվականի փոփոխություններով Հայաստանի Հանրապե-  
տության Սահմանադրության 55-րդ հոդվածի 16-րդ կետով և հիմք ընդունելով  
«Հայաստանի Հանրապետության պետական պարգևների և պատվավոր կոչումների  
մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը՝ **ո ր ո շ ու մ ե մ.**

Հայաստանի Հանրապետության Անկախության տոնի առթիվ, թատերական  
արվեստի զարգացման գործում ներդրած նշանակալի ավանդի համար Կ. Ստանիս-  
լավսկու անվան ռուսական պետական դրամատիկական թատրոնի գեղարվեստական  
ղեկավար և գլխավոր ռեժիսոր Ալեքսանդր Սամսոնի ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ պարգևատրել  
«Հայրենիքին մատուցած ծառայությունների համար» 1-ին աստիճանի շքանշանով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
Ն Ա Խ Ա Գ Ա Հ



Ս. ՍԱՐԳՍՅԱՆ

2017թ. սեպտեմբերի 11  
Երևան  
ՆՀ- 706 -Ա

